



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն N 908-Ն « 17. » 12. 13թ.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գրադարանների և գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սահմանել գրադարանային տեղեկատվական շտեմարանում գրադարանների հավաքածուների ընդգրկման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախարար՝



Հ. ՊՈՂՈՍՅԱՆ



«ՀՀ մշակույթի նախարարի 2013 թ. դեկտեմբերի 19-ի հրամանի»

Կ Ա Ր Գ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են գրադարանային տեղեկատվական շտեմարանի ստեղծման, շտեմարանում գրադարանների հավաքածուների ընդգրկման և շտեմարանի համակարգման հետ կապված հարաբերությունները:

2. Գրադարանային տեղեկատվական շտեմարանի ստեղծման հիմնական նպատակը գրադարանային հավաքածուների կազմի և քանակի վերաբերյալ համակարգված տեղեկույթի տրամադրումն է օգտվողներին:

3. Սույն կարգում օգտագործված հիմնական հասկացությունները՝

1) **Տեղակայման վայր**՝ գրադարանային փաստաթղթի մշտական պահպանության հանձնված վայր.

2) **Դասիչ**՝ նիշերի համակարգ՝ նախատեսված գրադարանային փաստաթղթի կոդավորման, դասակարգման և կազմակերպման համար.

3) **Հաշվառանիշ**՝ գրադարանային փաստաթղթի՝ գլխավոր մատյանում գրանցման հաշվառման համար.

4) **Սպասարկող կայան**՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենա, որի վրա տեղակայվում են շտեմարանները և որը համապատասխան ծրագրատեխնիկական միջոցների օգնությամբ ցանցային ծառայություններ է տրամադրում մասնակից գրադարաններին և օգտվողներին.

5) **Տաք ռեզերվ**՝ սպասարկող կայանների տեխնիկական փոխհամագործակցության համակարգ, որում ռեզերվ կայանը հանդիսանում է

հիմնականի հայելային պատճենը և դրա շարքից դուրս գալու պարագայում ավտոմատ իր վրա է վերցնում համակարգի կառավարումը:

6) **Գրադարանի տեղեկատվական շտեմարան** (այսուհետ՝ շտեմարան)՝ տրամաբանորեն իրար հետ կապված տեղեկատու և մատենագիտական տվյալների ամբողջություն է, որը ծառայում է հաշվողական տեխնիկայի կիրառմամբ գրադարանից օգտվողների տեղեկատվական պահանջմունքների բավարարմանը:

II. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ԱՍԵՂԾՈՒՄԸ

4. Շտեմարանի ստեղծման աշխատանքներին կարող է մասնակցել յուրաքանչյուր գրադարան՝ անկախ սեփականության ձևից:

5. Շտեմարանի կազմման գործում ընդգրկված գրադարանները պետք է միացված լինեն տվյալների հաղորդման լայնաշերտ արագագործ ցանցին:

6. Շտեմարանի ստեղծման աշխատանքները կազմակերպում և համակարգում է «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

7. Շտեմարանի կազմմանը մասնակցող յուրաքանչյուր գրադարան գրադարանային փաստաթղթի կազմի վերջին էջում փակցնում է նրբաթելային (շտրիխ կոդ) հաշվառանիշ, որը կազմված է 9 նիշից: Առաջին երկու նիշը գրադարանի կոդն է, հաջորդ 7 նիշը՝ փաստաթղթի հաշվառանիշը:

8. Գրադարանների կոդերը տրամադրում է «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և այդ կոդերը տարբեր գրադարանների համար նույնը չեն կարող լինել:

9. Յուրաքանչյուր մասնակից գրադարան մինչ գրառում ստեղծելը պետք է ստուգի իր նկարագած գրադարանային փաստաթղթի առկայությունը տեղեկատվական շտեմարանում: Եթե փաստաթուղթը առկա է, ապա գրադարանը ավելացնում է հաշվառանիշը, տեղակայման վայրը, դասիչ(ներ)ը: Եթե փաստաթուղթը առկա չէ, ապա գրադարանը իրականացնում է դրա մատենագիտական նկարագրությունը, այնուհետև ավելացնում է հաշվառանիշը, տեղակայման վայրը, դասիչ(ներ)ը:

10. Շտեմարանում գրադարանային փաստաթուղթը մուտքագրվում, նկարագրվում և որոնվում է ըստ բնօրինակի լեզվի:

11. Շտեմարանն ապահովում է գրադարանային փաստաթղթի մուտքագրումը և որոնումը, ինչպես գրադարանում, այնպես էլ առցանց:

III. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

12. Շտեմարանը գործում է շուրջօրյա՝ ապահովելով պահպանվող տեղեկույթի ապահովությունն ու օգտվողների հետ անխափան կապը:

13. Շտեմարանն օգտվողներին տրամադրվում է ազատ դիտման կարգավիճակով:

14. Շտեմարանի անխափան շահագործումը ապահովում է «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

15. Շտեմարանը տեղակայված է երկու սպասարկող կայանների վրա, որոնցից առաջինը (հիմնական կայանը) ծառայում է ժամանակի իրական մասշտաբում օգտվողների հարցումների սպասարկմանը, իսկ երկրորդը գործում է «տաք ռեզերվի» վիճակում և հանդիսանում է առաջին կայանի հայելային պատճենը: